# *4.2. Ապրանքների արտահանում և ներմուծում*

## *4.2.1. Արտաքին առևտուր*

*Արտաքին առևտրաշրջանառությունը:* Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2012թ. հունվար-հունիսին, փաստացի գներով, կազմել է 67635.5 մլն դրամ կամ 170860.5 հազար ԱՄՆ դոլար (հետայսու՝ հազ. դոլար), այդ թվում՝ ապրանքների արտահանումը՝ 11203.3 մլն դրամ (28278.7 հազ. դոլար), իսկ ներմուծումը՝ 56432.2 մլն դրամ (142581.8 հազ. դոլար): Առևտրային հաշվեկշիռը բացասական է 45228.9 մլն դրամով (114303.1 հազ. դոլարով):

2012թ. հունվար-հունիսին 2011թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արտաքին առևտրաշրջանառության ծավալը նվազել է 1.2 տոկոսով*, ընդ որում՝ արտահանումը՝ 31.3 տոկոսով, իսկ ներմուծումը աճել է 8.2 տոկոսով: Բացասական առևտրային հաշվեկշիռը աճել է է 26.2 տոկոսով: Առանց հաշվի առնելու վերաարտահանմանն** բնույթ ունեցող ապրանքատեսակները, 2011թ. հունվար-հունիսի համեմատ արտաքին ապրանքաշրջանառության ծավալը նվազել է 5.4 տոկոսով, ընդ որում արտահանումը՝ 39.6 տոկոսով, իսկ ներմուծումը աճել է 4.9 տոկոսով:

*ԼՂՀ արտաքին առևտրաշրջանառությունը 2012թ. հունվար-հունիսին*
*ըստ առանձին երկրների*

/հազ. ԱՄՆ դոլար/

| Երկրի անվանումը | Արտահանում | | | | | Ներմուծում | | | | | Առևտրային հաշվեկշիռը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2011թ. հունվար-հունիս | Տեսակարար կշիռը (%) | 2012թ. հունվար-հունիս | Տեսակարար կշիռը (%) | աճի տեմպը, % | 2011թ. հունվար-հունիս | Տեսակարար կշիռը (%) | 2012թ. հունվար-հունիս | Տեսակարար կշիռը (%) | աճի տեմպը, % | |
| **Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը** | **41180.1** | **100.0** | **28278.7** | **100.0** | **68.7** | **131769.7** | **100.0** | **142581.8** | **100.0** | **108.2** | **-114303.1** |
| այդ թվում՝ | | | | | | | | | | | |
| **ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ** | **38809.1** | **94.2** | **23460.6** | **83.0** | **60.5** | **126058.7** | **95.7** | **132299.6** | **92.8** | **105.0** | **-108839.0** |
| այդ թվում՝ | | | | | | | | | | | |
| Հայաստանի Հանրապետություն | 38155.8 | 92.6 | 22703.0 | 80.3 | 59.5 | 125639.6 | 95.3 | 130785.7 | 91.7 | 104.1 | -108082.7 |
| Ռուսաստանի Դաշնություն | 653.3 | 1.6 | 574.0 | 2.0 | 87.9 | 221.5 | 0.2 | 298.7 | 0.2 | 134.8 | 275.3 |
| Ուկրաինա | - | - | - | - | - | 109.3 | 0.1 | 334.3 | 0.2 | 3.1անգ | -334.3 |
| Բելոռուս | - | - | - | - | - | 88.3 | 0.1 | 477.9 | 0.4 | 5.4անգ | -477.9 |
| Մոլդովա | - | - | 183.6 | 0.7 | - | - | - | - | - | - | 183.6 |
| Ղազախստան | - | - | - | - | - | - | - | 403.0 | 0.3 | - | -403.0 |
| **ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐ** | **2371.0** | **5.8** | **4818.1** | **17.0** | **203.2** | **5711.0** | **4.3** | **10282.2** | **7.2** | **180.0** | **-5464.1** |
| այդ թվում՝ | | | | | | | | | | | |
| Միացյալ Թագավորություն | 2217.3 | 5.4 | 4756.5 | 16.8 | 2.1անգ. | 1668.7 | 1.3 | 6007.6 | 4.2 | 360.0 | -1251.1 |
| ՄԱԷ | - | - | - | - | - | 1230.0 | 0.9 | 533.8 | 0.4 | 43.4 | -533.8 |
| ԻԻՀ | - | - | - | - | - | 536.9 | 0.4 | 318.4 | 0.2 | 59.3 | -318.4 |
| Թուրքիա | - | - | - | - | - | 1122.4 | 0.9 | 1549.7 | 1.1 | 138.1 | -1549.7 |
| Չինաստան | - | - | - | - | - | 338.9 | 0.2 | 260.0 | 0.2 | 76.7 | -260.0 |
| Ֆրանսիա | 152.0 | 0.4 | 58.8 | 0.2 | 38.7 | 116.3 | 0.1 | 256.1 | 0.2 | 2.2անգ | -197.3 |
| Լիբանան | - | - | - | - | - | 217.3 | 0.2 | 72.7 | 0.0 | 33.5 | -72.7 |
| Միացյալ Նահանգներ | - | - | - | - | - | 213.2 | 0.2 | 121.0 | 0.1 | 56.8 | -121.0 |
| Իտալիա | 1.7 | 0.0 | 2.8 | 0.0 | 164.7 | 48.3 | 0.0 | 88.4 | 0.1 | 183.0 | -85.6 |
| Ճապոնիա | - | - | - | - | - | 40.7 | 0.0 | - | - | - | - |
| Կորեայի ԺԺՀ | - | - | - | - | - | 95.4 | 0.1 | - | - | - | - |
| Նիդերլանդներ | - | - | - | - | - | 25.2 | 0.0 | 23.8 | 0.0 | 94.4 | -23.8 |
| Պորտուգալիա | - | - | - | - | - | 9.0 | 0.0 | - | - | - | - |
| Գերմանիա | - | - | - | - | - | 2.1 | 0.0 | - | - | - | - |
| Իսրայել | - | - | - | - | - | 14.7 | 0.0 | 9.1 | 0.01 | 61.9 | -9.1 |
| Սիրիայի Արաբական Հանրապետություն | - | - | - | - | - | 2.8 | 0.0 | 6.0 | 0.0 | 2.1անգ | -6.0 |
| Չեխիայի Հանրապետություն | - | - | - | - | - | - | - | 2.4 | 0.0 | - | -2.4 |
| Կանադա | - | - | - | - | - | 29.0 | 0.0 | | | - | |
| Շրի լանկա | - | - | - | - | - | - | - | 1.3 | 0.0 | - | -1.3 |
| Կիպրոս | - | - | - | - | - | - | - | 10.0 | 0.0 | - | -10.0 |
| Վերջինյան կղզիներ | - | - | - | - | - | - | - | 957.3 | 0.7 | - | -957.3 |
| Սլովակիա | - | - | - | - | - | - | - | 38.3 | 0.0 | - | -38.3 |
| Իսպանիա | - | - | - | - | - | - | - | 26.3 | 0.0 | - | -26.3 |

---

* *Համեմատությունը կատարվում է ԱՄՆ դոլարով:*

** *Վերաարտահանումը ներմուծված ապրանքների այնպիսի արտահանում է, որոնք երկրի սահմանն անցել են տվյալ պետությունում վերամշակվելու և հետագայում սկզբնական առաքիչ երկիր վերադարձնելու նպատակով (կնքված պայմանագրերի հիման վրա և սահմանված վճարի դիմաց): Այս խմբի ապրանքների վրա սեփականության իրավունքը չի անցնում մի սեփականատերից մյուսին:*

2012թ. հունվար-հունիսին ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 61640.4 մլն դրամ (155760.2 հազ. դոլար) կամ ընդհանուր ապրանքաշրջանառության 91.2 տոկոսը, իսկ այլ երկրների հետ՝ 5995.1 մլն դրամ (15100.3 հազ. դոլար) կամ 8.8 տոկոսը:

ԱՊՀ երկրներ են արտահանվել 9291.2 մլն դրամի (23460.6 հազ. դոլարի) և այդ երկրներից ներմուծվել՝ 52349.3 մլն դրամի (132299.6 հազ. դոլարի) ապրանքներ: Առևտրային հաշվեկշիռը բացասական է 43058.1 մլն դրամով (108839.0հազ. դոլարով):

Այլ երկրներ արտահանվել են 1912.1 մլն դրամի (4818.1 հազ. դոլարի) և այդ երկրներից ներմուծվել՝ 4083.0 մլն դրամի (10282.2 հազ. դոլարի) ապրանքներ: Առևտրային հաշվեկշիռը բացասական է 2170.8 մլն դրամով (5464.1 հազ. դոլարով):

2012թ. հունվար-հունիսին արտահանման ծավալի 83.0 տոկոսն ուղղվել է ԱՊՀ երկրներ (որից՝ 96.8 տոկոսը՝ Հայաստանի Հանրապետություն, 2.4 տոկոսը՝ Ռուսաստանի Դաշնություն, 0.8 տոկոսը՝ Մոլդովա), 17.0 տոկոսը՝ աշխարհի այլ երկրներ (որից 98.7 տոկոսը՝ Միացյալ Թագավորություն, 1.2 տոկոսը՝ Ֆրանսիա, 0.1 տոկոսը Իտալիա): Ներմուծման ծավալի 92.8 տոկոսը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին (որից 98.9 տոկոսը՝ Հայաստանի Հանրապետությանը, 0.4 տոկոսը՝ Բելառուսին, 0.3-ական տոկոսը՝ ՈՒկրաինային և Ղազախստանին, 0.2 տոկոսը՝ Ռուսաստանի Դաշնությանը), իսկ 7.2 տոկոսը՝ այլ երկրներին (որից 58.4 տոկոսը՝ Միացյալ Թագավորությանը, 15.1 տոկոսը՝ Թուրքիային, 9.3 տոկոսը՝ Վերջինյան կղզիներին, 5.2 տոկոսը՝ Միացյալ Արաբական Էմիրություններին, 3.1 տոկոսը՝ Իրանի Իսլամական Հանրապետությանը, 2.5-ական տոկոսը՝ Չինաստանին և Ֆրանսիային և այլն):

*Արտահանման և ներմուծման ծավալները ըստ ԱՊՀ և այլ երկրների*
*2011-2012թթ. հունվար-հունիսին*

*Արտահանում (հազ. ԱՄՆ դոլար)*




*Ներմուծում(հազ. ԱՄՆ դոլար)*




## *Արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը*

*ԼՂՀ արտաքին առևտրաշրջանառությունը 2012թ. հունվար-հունիսին*
*ըստ ապրանքախմբերի*

| Ապրանքային խմբի անվանումը | Արտահանում | | | Ներմուծում | | | Հաշվեկշիռը, հազ. ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|---|---|---|
| | արժեքը | | տեսակարար կշիռը (%) | արժեքը | | տեսակարար կշիռը (%) | |
| | մլն դրամ | հազ. ԱՄՆ դոլար | | մլն դրամ | հազ. ԱՄՆ դոլար | | |
| ***Ընդամենը*** | **11203.3** | **28278.7** | **100.0** | **56432.2** | **142581.8** | **100.0** | **-114303.1** |
| այդ թվում՝ | | | | | | | |
| Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք | 430.2 | 1079.5 | 3.8 | 2674.1 | 6748.2 | 4.7 | -5668.7 |
| Բուսական ծագման արտադրանք | 1378.5 | 3448.6 | 12.2 | 3467.2 | 8772.8 | 6.1 | -5324.2 |
| Յուղեր և ճարպեր | - | - | - | 597.4 | 1505.4 | 1.1 | -1505.4 |
| Պատրաստի սննդի արտադրանք | 1029.8 | 2609.2 | 9.2 | 9697.5 | 24515.2 | 17.2 | -21906.0 |
| Հանքահումքային մթերքներ | 5104.0 | 12922.2 | 45.7 | 10668.3 | 26972.2 | 18.9 | -14050.0 |
| Քիմիական արտադրության ապրանքներ | 22.6 | 57.0 | 0.2 | 3103.0 | 7840.6 | 5.5 | -7783.6 |
| Պլաստմասսա, կաուչուկ, ռետին | 87.4 | 220.6 | 0.8 | 643.9 | 1619.9 | 1.1 | -1399.3 |
| Կաշի և դրանից իրեր | 3.8 | 9.7 | 0.0 | 104.9 | 268.3 | 0.2 | -258.6 |
| Փայտ և փայտյա իրեր | 260.6 | 657.6 | 2.3 | 431.3 | 1087.8 | 0.8 | -430.2 |
| Թուղթ և թղթյա իրեր | - | - | - | 256.2 | 651.0 | 0.5 | -651.0 |
| Մանածագործական իրեր | 15.2 | 38.6 | 0.1 | 2062.0 | 5207.0 | 3.6 | -5168.4 |
| Կոշկեղեն, հովանոցներ, գլխարկներ | 303.3 | 763.8 | 2.7 | 487.0 | 1228.2 | 0.9 | -464.4 |
| Իրեր քարից, գիպսից, ցեմենտից | 54.5 | 137.1 | 0.5 | 2185.0 | 5527.2 | 3.9 | -5390.1 |
| Թանկարժեք քարեր և մետաղներ | 1887.4 | 4756.4 | 16.8 | 2526.0 | 6352.3 | 4.5 | -1595.9 |
| Ոչ թանկարժեք մետաղներ և իրեր դրանցից | 271.4 | 684.4 | 2.4 | 1782.5 | 4491.0 | 3.1 | -3806.6 |
| Մեքենաներ և սարքավորումներ | 217.4 | 546.1 | 2.0 | 5096.8 | 12847.0 | 9.0 | -12300.9 |
| Տրանսպորտային միջոցներ | 83.0 | 211.5 | 0.8 | 5723.2 | 14537.3 | 10.2 | -14325.8 |
| Սարքեր և ապարատներ | 22.1 | 55.2 | 0.2 | 456.1 | 1139.9 | 0.8 | -1084.7 |
| Կահույք, խաղալիքներ, այլ պատրաստի իրեր | 32.1 | 81.2 | 0.3 | 4469.0 | 11268.5 | 7.9 | -11187.3 |

| Ապրանքային խմբի անվանումը | Արտահանում | | | Ներմուծում | | | Հաշվեկշիռը, հազ. ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|---|---|---|
| | արժեքը | | տեսակարար կշիռը (%) | արժեքը | | տեսակարար կշիռը (%) | |
| | մլն դրամ | հազ. ԱՄՆ դոլար | | մլն դրամ | հազ. ԱՄՆ դոլար | | |
| Արվեստի ստեղծագործություններ, հնաոճ իրեր | - | - | - | 0.8 | 2.0 | 0.0 | -2.0 |

2012թ. հունվար-հունիսին հանրապետությունից արտահանված ապրանքների ընդհանուր ծավալի 45.7 տոկոսը կազմել են հանքահումքային մթերքները, 16.8 տոկոսը՝ թանկարժեք քարեր և մետաղները, 12.2 տոկոսը՝ բուսական ծագման արտադրանքը, 9.2 տոկոսը՝ պատրաստի սննդի արտադրանքը և այլն: Ներմուծման մեջ 18.9 տոկոսը կազմել են հանքահումքային մթերքները, 17.2 տոկոսը՝ պատրաստի սննդի արտադրանքը, 10.2 տոկոսը տրանսպորտային միջոցները, 9.0 տոկոսը՝ մեքենաներ և սարքավորումները, 7.9 տոկոսը՝ կահույք, խաղալիքներ, այլ պատրաստի իրերը, 6.1 տոկոսը՝ բուսական ծագման արտադրանքը և այլն:

2012թ. հունվար-հունիսին բոլոր ապրանքախմբերի գծով առևտրային հաշվեկշիռը բացասական է:

*Արտահանման և ներմուծման ծավալների դինամիկան*
*ըստ ապրանքախմբերի*

*/հազ. ԱՄՆ դոլար/*

| Ապրանքային խմբի անվանումը | Արտահանում | | | Ներմուծում | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2011թ. հունվար-հունիս | 2012թ. հունվար-հունիս | Աճի տեմպը, տոկոս | 2011թ. հունվար-հունիս | 2012թ. հունվար-հունիս | Աճի տեմպը, տոկոս |
| ***Ընդամենը*** | **41180.1** | **28278.7** | **68.7** | **131769.7** | **142581.8** | **108.2** |
| *այդ թվում՝* | | | | | | |
| Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք | 705.1 | 1079.5 | 153.1 | 5933.6 | 6748.2 | 113.7 |
| Բուսական ծագման արտադրանք | 784.8 | 3448.6 | 4.4անգ | 8699.6 | 8772.8 | 100.8 |
| Յուղեր և ճարպեր | - | - | - | 1324.0 | 1505.4 | 113.7 |
| Պատրաստի սննդի արտադրանք | 3506.9 | 2609.2 | 74.4 | 21198.9 | 24515.2 | 115.6 |
| Հանքահումքային մթերքներ | 29341.4 | 12922.2 | 44.0 | 27447.4 | 26972.2 | 98.3 |
| Քիմիական արտադրության ապրանքներ | 10.3 | 57.0 | 5.5անգ | 8269.6 | 7840.6 | 94.8 |
| Պլաստմասսա, կաուչուկ, ռետին | 522.2 | 220.6 | 42.2 | 1896.2 | 1619.9 | 85.4 |
| Կաշի և դրանից իրեր | 14.9 | 9.7 | 65.1 | 112.6 | 268.3 | 2.4անգ |
| Փայտ և փայտյա իրեր | 62.0 | 657.6 | 10.6անգ | 1239.2 | 1087.8 | 87.8 |
| Թուղթ և թղթյա իրեր | - | - | - | 643.7 | 651.0 | 101.1 |
| Մանածագործական իրեր | 193.9 | 38.6 | 19.9 | 4468.8 | 5207.0 | 116.5 |
| Կոշկեղեն, հովանոցներ, գլխարկներ | 1331.3 | 763.8 | 57.4 | 1143.7 | 1228.2 | 107.4 |
| Իրեր քարից, գիպսից, ցեմենտից | 223.4 | 137.1 | 61.4 | 4994.5 | 5527.2 | 110.7 |
| Թանկարժեք քարեր և մետաղներ | 2217.3 | 4756.4 | 2.1անգ | 1887.6 | 6352.3 | 3.4անգ |
| Ոչ թանկարժեք մետաղներ և իրեր դրանցից | 1249.4 | 684.4 | 54.8 | 5473.8 | 4491.0 | 82.0 |
| Մեքենաներ և սարքավորումներ | 182.2 | 546.1 | 3.0անգ | 11670.3 | 12847.0 | 110.1 |
| Տրանսպորտային միջոցներ | 740.0 | 211.5 | 28.6 | 14068.4 | 14537.3 | 103.3 |
| Սարքեր և ապարատներ | - | 55.2 | - | 362.9 | 1139.9 | 3.1անգ |
| Կահույք, խաղալիքներ, այլ պատրաստի իրեր | 95.0 | 81.2 | 85.5 | 10909.2 | 11268.5 | 103.3 |
| Արվեստի ստեղծագործություններ, հնաոճ իրեր | - | - | - | 25.6 | 2.0 | 7.8 |

Նախորդ տարվա հունվար-հունիսի նկատմամբ արտահանման ծավալի աճ է գրանցվել հետևյալ ապրանքային խմբերի գծով՝ փայտ և փայտյա իրեր՝ 10.6 անգամ, քիմիական արտադրության ապրանքներ՝ 5.5 անգամ, բուսական ծագման արտադրանք՝ 4.4 անգամ, մեքենաներ և սարքավորումներ՝ 3.0 անգամ, թանկարժեք քարեր և մետաղներ՝ 2.1 անգամ, կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք՝ 53.1 տոկոսով և այլն: Միևնույն ժամանակ նվազել են մանածագործական իրերը՝ 80.1 տոկոսով, տրանսպորտային միջոցները՝ 71.4 տոկոսով, պլաստմասսա, կաուչուկ, ռետինը՝ 57.8 տոկոսով, հանքահումքային մթերքները՝ 56.0 տոկոսով, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրերը՝ 45.2 տոկոսով և այլն:

Ներմուծված ապրանքախմբերից զգալիորեն աճել են թանկարժեք քարեր և մետաղները 3.4 անգամ, սարքեր և ապարատները 3.1 անգամ, կաշի և դրանից իրերը 2.4 անգամ, մանածագործական իրերը (16.5 տոկոսով), պատրաստի սննդի արտադրանքը (15.6 տոկոսով) և այլն, նվազել են՝ արվեստի ստեղծագործություններ, հնաոճ իրերը (92.2 տոկոսով), ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրերը (18.0 տոկոսով), պլաստմասսա, կաուչուկ, ռետինը (14.6 տոկոսով) և այլն:

## *4.2.2. Մարդասիրական օգնություն*

Ըստ ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարության տվյալների, 2012թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում մարդասիրական օգնության կարգով Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն են ներմուծվել 95948.2 հազ. դրամի ապրանքներ: Ստացված մարդասիրական օգնության 90.4 տոկոսը կազմել են դեղորայքը և բժշկական տարբեր ապրանքները, 8.5 տոկոսը՝ զանազան շինանյութերը, 0.8 տոկոսը՝ տարբեր տեսակի ապրանքները, 0.5 տոկոսը՝ ապարատներ և սարքերը և այլն:

*ԼՂՀ ներմուծված մարդասիրական օգնության ծավալն ըստ առանձին ապրանքախմբերի*

*/հազ. դրամ/*

| | 2011թ.# հունվար-հունիս | | 2012թ. հունվար-հունիս | | Աճի տեմպը, % |
|---|---|---|---|---|---|
| | քանակը | արժեքը | քանակը | արժեքը | |
| ***Ընդամենը*** | | ***148170.7*** | | ***95948.2*** | ***64.8*** |
| *այդ թվում՝* | | | | | |
| Փայտեղեն և նրանից պատրաստված արտադրանք, հատ | 68 | 6594.5 | - | - | - |
| Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք, հատ | - | - | - | - | - |
| Նոր կոշիկ, զույգ | - | - | | | |
| Նախկինում օգտագործված կոշիկ, զույգ | 109 | 204.7 | - | - | - |
| Հագուստեղեն, գլխարկներ, հովանոցներ, հատ | 134 | 469.6 | - | - | - |
| Նախկինում օգտագործված հագուստ, հատ | 2286 | 3405.1 | 87 | 85.8 | 2.5 |
| Տարբեր տեսակի գուլպաներ և զուգագուլպաներ, զույգ | 21 | 10.5 | - | - | - |
| Ապարատներ և սարքեր, հատ | 2808 | 19519.4 | 594 | 510.1 | 2.6 |
| Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ, հատ | 88 | 26184.8 | - | - | - |
| Դեղորայք և բժշկական տարբեր ապրանքներ | 332743 | 32070.3 | 488062 | 86700.6 | 2.7անգ. |
| Զանազան արդյունաբերական ապրանքներ, հատ | 43541 | 46258.2 | - | - | - |
| Զանազան շինանյութեր, հատ | 336 | 435.1 | 292 | 7845.2 | 18.0անգ. |
| Տարբեր տեսակի ապրանքներ, հատ | 583 | 13018.5 | 404 | 806.5 | 6.2 |

2012թ. հունվար-հունիսին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ մարդասիրական օգնության ծավալը նվազել է 35.2 տոկոսով: Մարդասիրական օգնությունը ստացվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Հայաստանի Հանրապետությունից, Հոլանդիայից և Ֆրանսիայից:

*ԼՂՀ ներմուծված մարդասիրական օգնության ծավալն ըստ երկրների*

| | Արժեքը, հազ. դրամ | | Տեսակարար կշիռը, % | |
|---|---|---|---|---|
| | 2011թ.# հունվար- հունիս | 2012թ. հունվար- հունիս | 2011թ.# հունվար- հունիս | 2012թ. հունվար- հունիս |
| ***Ընդամենը*** | ***148170.7*** | ***95948.2*** | ***100.0*** | ***100.0*** |
| *այդ թվում՝* | | | | |
| ԱՄՆ | 75047.7 | 45444.8 | 50.6 | 47.3 |
| Հայաստանի Հանրապետություն | - | 33066.9 | - | 34.5 |
| Հոլանդիա | 8876.6 | 9023.8 | 6.0 | 9.4 |
| Միացյալ Արաբական Էմիրություն | 51345.3 | - | 34.7 | - |
| Ի Ի Հ | 3942.1 | - | 2.7 | - |
| Գերմանիա | 756.0 | - | 0.5 | - |
| Ֆրանսիա | - | 8412.7 | - | 8.8 |
| Կանադա | 8203.0 | - | 5.5 | - |

*Մարդասիրական օգնության ծավալների դինամիկան (հունվար-հունիսին), ըստ տարիների, հազ.դրամ*

